

ԲԱՐԵԿԱՄ

Պատշաճ է երկնաքաղաքացի անուանելանոնցորոնքբարեպաշտական գործերով, բարեկամութեան սերտ սիրով իրարմէնանրաժաման կրմանս: Այս է երկրի վրայ երկնային կեանք վարելը, որովհետեւերկնայիններուն յատուկ է սիրոյ մէջ հաստատուն մնալ Աստուծոյ եւ ընկերոջ հանդէպ: Ուստի ով, որ բարիներու հետ բարեկամութեամբ ու բարի գործերով կ'ապրի նախքան երջանիկներու աշխարհը ելլելը՝ անոնց կենցաղավարութիւնը իր մէջ կը կրէ:

Ճրագը, որքան ալ լուսափայլ ըլլայ, պատրոյզի վառման պէտք ունի, իսկ եթէ անհանդարտ մնայ, դիւրահալ ու աղօտալոյս կը դառնայ: Այսպէս եւ մարդը, որքան ալ բազմահանձար ըլլայ, բարեկամներու խորհրդակցութեան կարիքն ունի, որ պէսգի չըլլայ թէ խորհրդածուած որեւէ կարեւոր գաղափար, ճրագի իւղի պէս հալելով, սպառի կամ աւելորդ պարագաներով աւելցուելով՝ իր պայծառութիւնը թողցնէ:

Իմաստունբարեկամներու խրատը աւելի լաւ կը պահպանէ իշխանը քան՝ անհեղ զօրքի բազում գունդերը: Վրտանգներու մէջ կ'ընկնին անոնք՝ որոնք բարեկամներու խրատը կ'արհամարհեն:

Ճշմարիտ բարեկամութեան նշաններէն մէկն է ընկերոջ գաղտնիքները սրտի գաղտնարանին մէջ պահել եւ օտարներուն չմատնել, որովհետեւ բարեկամութեան հիմքը հաստատուն չ'ըլլար: Ճշմարիտ բարեկամ չէ ան՝ որ իր բարեկամին հետ գժտուելով՝ հաւատարմութեան կնիքը կը խափանէ եւ ընկերոջ գաղտնիքները կը հրապարակէ:...

Շարունակելի

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԴԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԴԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ՈԳԻՆԵՐՈՒ ՀՄԱՅՈՒԹԻՒՆ

Ուրեմն, ով որ կը դիմէ գուշակին, երես կը դարձնէ Աստուծոյ եւ մութ ուժերէն օգնութիւն կը հայցէ: Աստուած աւելի խիստ ձեւով կ'ըսէ. «Վհուկներուն ու հմայողներուն դիմող եւ անոնցմով ինծի դէմ անհաւատարմութիւնը ընող ոեւէ անձի դէմ պիտի դառնամ, եւ գայն իր ժողովուրդին մէջէն պիտի կորսնցնեմ» (Ղեւտական 20.6):

Լաւ լսէ՛, թանկագին հոգի: Եթէ կ'ուզես այս գործերով զբաղիլ, գիտցի՛ր որ Աստուած քեզմէ երես կը դարձնէ: Արդօք գիտե՞ս թէ ինչ կը նշանակէ, երբ Աստուած կը դադրի քու մասիդ հոգայէ, կը դադրի ողորմած ըլլալէ, օրհնեալը եւ բարին ընելէ: Անիկա քեզմէ երես կը դարձնէ՝ իբրեւ հակառակորդ եւ իբրեւ հանդիմանող, եւ քեզ կը վերցնէ մարդոց մէջէն:

Ալ ո՞վ կրնայ պնդել, որ անմեղ զբաղում մըն է անիկա: Կամ կրնա՞ս արդարանալ, ըսելով՝ թէ քու հաւատացեալ մայրդ կամ հայրդ անոր մէջ ոեւէ գէշ բան չեն տեսներ: Հիմա կրնա՞ս արդեօք ըսել, թէ հմայութիւնն ու կախարդութիւնը մեծ մեղք համարելը չափազանցութիւն է:


Ո՛չ, այս ճամբան բնաւ Աստուածաշունչէն չէ ընդօրինակուած: Ատիկա ժողովրդական բժշկութիւնն է՛, այլ՝ մեղք է, կախարդութիւն, որ գարշելի է Աստուծոյ աչքին, եւ կրնայ քեզի մահ բերել, եթէ ամբողջ սրտով չապաշխարես:

ՉԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax: 01-258300 - E-mail: jerak@live.com



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԲԵՌՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119.105)

Ե. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ՝ 4 ՄԱՐՏ, 2012 ԹԻՒ 10

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԼՍՏ ՂՈՒԿԱՍԻ 15.1-32

Գ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՅ: ԱՆԱՌԱԿԻ

Մարդ մը երկու գաւակ ունէր: Կրտսերը հօրը ըսաւ. «Հա՛յր, քու ստացուածքէդ ինծի ինկող բաժինը հիմա տուր ինծի»: Եւ հայրը իր գաւակներուն միջեւ բաժնեց իր ունեցածը: Քանի մը օր ետք կրտսեր գաւակը առաւ իր ամբողջ հարստութիւնը եւ հեռու երկիր մը գնաց: Հոն անառակ կեանք մը ապրելով մսխեց հարստութիւնը եւ սպառեց իր ամբողջ ունեցածը:

Պատահեցաւ, որ այդ երկրին մէջ մեծ սով մը տիրեց, երբ արդէն ինք սկսած էր աղքատանալ: Ուստի գնաց այդ երկրի քաղաքացիներէն մէկուն քով ծառայ եղաւ, եւ անիկա իր ազարակը դրկեց զինք՝ խոզեր արածելու համար: Նոյնիսկ պատրաստ էր խոզերուն կերած եղջիւրներով իր փորը լեցնելու, սակայն ոչ ոք կու տար իրեն: Երբ անդրադարձաւ իր վիճակին, ինքնիրեն ըսաւ. «Հօրս տան մէջ քանի՞ գործաւորներ կան, որոնք իրենց պէտք եղած կերակուրէն աւելին ունին, մինչ ես հոս անօթութենէ կը մեռնիմ: Ելլեմ երթամ հօրս քով եւ ըսեմ իրեն. - Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու. գիտ նկատէ՛ քու գործաւորներէդ մէկը»: Ապա ելաւ եւ հօրը քով գնաց: Տակաւին տունէն բաւական հեռու էր, երբ հայրը տեսաւ զինք ու գնաց վագելով դիմաւորեց գայն, վզին փաթթուեցաւ եւ համբուրեց: Որդին հօրը ըսաւ. «Հա՛յր, մեղանչեցի Աստուծոյ եւ քեզի դէմ. այլեւս արժանի չեմ քու որդիդ կոչուելու»: Հայրը իր ծառաներուն հրամայեց. «Անմիջապէս բերէ՛ք լաւագոյն պատմուճանը եւ հագցուցէ՛ք իրեն. մատանի անցուցէ՛ք իր մատին եւ կօշիկ տուէ՛ք իրեն: Բերէ՛ք պարարտ հորթը, մորթեցէ՛ք, ուտենք եւ ուրախանանք: Որովհետեւ իմ այս գաւակս մեռած էր՝ եւ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»: Եւ սկսան խրախճանքի:

Մինչ այդ, երէց գաւակը ազարակ կը գտնուէր: Վերադարձին, երբ տան մօտեցաւ՝ երգի ու պարի ձայներ լսեց: Կանչեց ծառաներէն մէկը եւ հարցուց թէ ինչ կայ: Ծառան ըսաւ իրեն. «Եղբայրդ եկաւ. եւ որովհետեւ ողջ-առողջ վերադարձաւ, հայրդ պարարտ հորթը մորթեց»: Երէց գաւակը զայրացաւ եւ չուզեց ներս մտնել: Այս մասին իմանալով, հայրը դուրս ելաւ եւ աղաչեց որ ներս մտնէ:

Իսկ ան պատասխանեց. «Տարիներէ ի վեր քեզի կը ծառայեմ. ոեւէ մէկ հրահանգդ չանտեսեցի, եւ սակայն նոյնիսկ ուլ մը չտուիր ինծի, որ ուրախանայի բարեկամներուս հետ: Մինչդեռ, երբ քու այդ որդիդ եկաւ, որ քու ստացուածքդ պոռնիկներուն հետ մսխեց, պարարտ հորթը մորթեցիր անոր համար»:

Հայրը ըսաւ. «Տղաս՛, դու ինչու ինծի հետ ես եւ ամբողջ ունեցածս քուկդ է: Սակայն հիմա պէտք է ուրախանանք եւ ցնծանք, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ողջնցաւ, կորսուած էր՝ գտնուեցաւ»:

ԿԻՐԵՂ ՀԱՅՐԱՊԵՏ

Վարդապետ եկեղեցւոյ. ծնաւ 315-ին Երուսաղեմի մօտերը, քահանայ ձեռնադրուեցաւ 345-ին, պատրիարք ընտրուեցաւ 350-ին: Իր առաքինակրօն կեանքին եւ իմաստութեան համար սիրելի դարձած էր ուղղափառներուն եւ նոյնիսկ չարափառներուն, այսինքն՝ արիոսեանց: Բայց պատրիարքական աթոռ ելլելէ առաջ, երբ ըմբերանց այս վերջինները, անոնք հակառակութեամբ լեցուեցան իր դէմ: Այն հակառակութեան հետեւանքովն էր որ անգամ մը գահընկեց եղաւ, եւ յետոյ նորէն դարձաւ Երուսաղեմ, Յուլիանոս Ուրացոյի ատեն, որուն հրէից Տաճարը վերաշինելու ամբիտ ձեռնարկին ակնատես իսկ եղաւ: Արիոսականները յաջողեցան վերստին ձգել զինքը իր Աթոռէն, որուն վրայ վերջապէս վերահաստատեց յետոյ զինքը Կ. Պոլսոյ ժողովը: Իր օրով տեղի ունեցաւ Ս. Խաչին հրաշալի երեւումը Երուսաղեմի մէջ, որուն համար ծանուցանող նամակ մը ուղղեց Կոստանդ կայսեր: Իր հոգեւոր գործունէութեան ամէնէն փայլուն եւ արդիւնաւոր կողմերէն մին եղաւ ի քրիստոնէութիւն դարձրելու բազմաթիւ հեթանոսներու, որոնք իր ձեռքէն կ'ընդունէին քրիստոնէութիւնը:

Այս առթիւ խօսած իր քարոզները, որոնք քրիստոնէական վարդապետութեան սքանչելի սկզբունքները կը պարունակեն, մեծ մասամբ ամփոփուած են «Կոչումն ընծայութեան» հատորին մէջ, որ ոսկեդարեան թարգմանութեամբ վերածուած է հայերէնի:

Թարգմանուած է նոյնպէս Կոստանդ կայսեր ուղղած իր նամակը: Իսկ աւանդութիւնը Երուսաղեմի Ս. Յակոբեանց եկեղեցիի Ս. Ստեփանոս մատրան մէջ կը ցուցնէ աւագանը, որուն մէջ Ս. Կիրեղ մկրտած էր երախայից բազմութիւն մը:

ՄԵԾ ՊԱՀՔԸ

Իբրեւ պահեցողութեան քառասնօրեայ շրջան, Մեծ Պահքին հիմքն է մեր Փրկչին 40 օրերու ծոմապահութիւնը անապատին մէջ: Եւ որովհետեւ մարդկային սովորական բնութիւնը գրեթէ անկարող է ստիպել 40 օրերու՝ ցերեկ եւ գիշեր, միանուագ պահեցողութեան, ուստի Եկեղեցին տնօրինած է օրական մէկ ժողով միայն ուստիով 40 օրերու պահեցողութիւն կատարել: Ասիկա կոչուած է Մեծ Պահք, հակադրաբար միւս պահքերուն, որոնք շաբաթը հինգ կամ երկու օրեր էին: Մեծ Պահքին գլխաւոր նպատակն էր նախապատրաստել հաւատացեալը, որ Աւագ Շաբթուան ընթացքին արժանապէս մօտենայ Ս. Հաղորդութեան եւ աւելի մեծ ուրախութեամբ տօնէ Ս. Զատիկը:

ՓԱԿԵԱԼ ԽՈՐԱՆ
Մեծ պահքի շրջանին, եկեղեցիներէն ներս խորանները կը մնան փակ: Միակ բացառութիւնն է եկեղեցիներու անլանակոչութեան տօնը, երբ վարագոյրը կը բացուի, օրինակ Քառասնից Մանկանց եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի տօներուն:

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՅԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԽՈՐՈՒՐԴՆԵՐԸ

ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Քահանայական աստիճանէն վար եւ վեր ուրիշ ի՞նչ աստիճաններ կան մեր եկեղեցւոյ մէջ:

Քահանայութենէն վար վեց աստիճաններ կան, իսկ անկէ վեր՝ երեք:

Վարի վեցը կը կոչուին փոքր աստիճաններ, եւ են.

- ա) Դոնապանութիւն,
 - բ) Ընթերցողութիւն,
 - գ) Երդմնեցուցչութիւն,
 - դ) Զահրնկալութիւն,
 - ե) Կիսասարկաւագութիւն,
 - զ) Սարկաւագութիւն,
 - է) Վերի երեքներն են.
 - է) Քահանայութիւն
 - ը) Եպիսկոպոսութիւն
 - թ) Կաթողիկոսութիւն
- Ըսել է, բոլորը միասին, ինը աստիճան:

Փոքր աստիճանները գործնականապէս կա՛ն մեր Եկեղեցւոյ մէջ հիմա:

Այո՛: Զեռնադրութեան Մաշտոցիմ մէջ կան անոնք եւ քահանայութեան կոչուողը՝ ձեռնադրութեամբ կը ստանայ վեց աստիճանները եւ յետոյ՝ քահանայութեանը:

Բայց մեր Եկեղեցւոյ գործնական կեանքին մէջ, փոքր աստիճաններէն չորսը կը կոչուին ԴՊՐՈՒԹԻՒՆ. եւ դպիրներ, ձեռնադրուած ըլլան կամ ոչ, շապիկ կը հագնին, կիսասարկաւագի պաշտօն կը կատարեն, կ'երգեն շարականները եւ մասնաւորապէս սուրբ պատարագին երգերը: Ընդհանրապէս դպիրները ձեռնադրուած կ'ըլլան...

Շարունակելի

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

ՔՈՒ ՄԵԾԱԳՈՅՆ ԲԱՂՁԱՆՔԻ

Աստուած է, որ ձեր մէջ կը ներգործէ կամենալը եւ ընելը իր հաճութեան համար: (Փիլիպպեցիս 2.13)

Հետեւեալ խօսքը շատերու կողմէ որդեգրուած սկզբունք մըն է. «Եթէ որեւէ բան քեզի հաճոյ կը թուի, ըրէ՛ առանց վարանումի»: Այս կը նշանակէ, թէ հաճոյքը ինքնին սխալ չէ՝ բայց կրնայ առաջնորդել բարոյական ու հոգեւոր քայքայումի, եթէ Աստուծոյ հոգին չկառավարէ մեզ:

Նկատի առնենք մարդ արարածի բնական փափաքը զգացական եւ Ֆիզիքական մտերմութեան նկատմամբ: Բոլորս ալ կարիքը ունինք անոր: Սակայն եթէ այնպէս պատահի, որ անձի մը ամուսնական կեանքին մէջ այդ մտերմութեան կարիքը գոհացում չի գտներ՝ զայն ուրիշ տեղ փնտռելը կ'առաջնորդէ սխալ ճամբաներու եւ հոգեկան ու բարոյական քայքայումի: Բնական է փնտռել հաճոյքը եւ խոստովիլ ցաւէն: Հետեւաբար դիւրին է ընդունիլ այն գաղափարը, թէ ինչ որ հաճոյք կը պատճառէ չի կրնար սխալ ըլլալ: Բայց չմոռնանք որ մեր զգացումները ապահով առաջնորդներ չեն:

Քանի որ մենք մեղանշական բնութիւն ունինք, մեզի համար անհրաժեշտ է ունենալ փափաք մը, որ աւելի բուռն ըլլայ քան մեր ուրիշ փափաքները: Այս փափաքը մեր մէջ յառաջ կուգայ երբ հաւատանք Յիսուս Քրիստոսի եւ Աստուծոյ հաճելի կեանք մը ապրիլը դառնայ մեր բուռն փափաքը: Այս փափաքը կրնայ մեղմանայ կեանքի պարագաներուն տակ, բայց Աստուած մեր մէջ կը ներգործէ «կամենալը եւ ընելը իր հաճութեան համար»: Արդեօք ի՞նչ է քու մեծագոյն փափաքը:

Երբ կը բաղձաս Աստուծոյ հաճելի ըլլալ, ըրէ՛ ինչ որ կրնաս:

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ

54.11- -55.13

Տէրը այսպէս կ'ըսէ. – «Ո՛վ երուսաղէմ, փոթորիկէն զարնուած անմխիթար տառապեալ, հաշտութիւն պիտի ընեմ հետդ, որպէսզի մխիթարուիս. ահա ես քու հիմերդ շափուղայ քարերով պիտի դնեմ, պատերդ՝ կարկեհան քարերով, աշտարակներդ կարմիր յակինթներով պիտի կանգնեմ, դռներդ՝ բիրբողէ, եւ շուրջդ պարիսպ պիտի քաշեմ ընտիր եւ թանկագին քարերով:

Բոլոր որդիներդ Աստուծմէ ուսած պիտի ըլլան, գաւակներդ մնայուն խաղաղութիւն պիտի վայելեն, եւ դուն արդարութեան մէջ պիտի հաստատուիս: Այ բռնութեան վախը պիտի չունենաս, արհաւիրքը քեզի պիտի չմօտենայ: Քեզի եկողները պիտի ըլլան միայն անոնք՝ որոնք ինձմով դարձի կու գան. իրենց երկիրները ձգելով պիտի գան քու կողքիդ բնակին, քեզ իրենց ապաստանը դարձնելով:

Ահա ես ինքս քեզ հաստատեցի. դարբինը իր փէոցով կրակը կ'արծարծէ եւ կը շինէ գործիքներ որոնք գործածութեամբ կը մաշին ու կը փեմանան. սակայն ես քեզ հաստատեցի որ միշտ մնաս:

Որեւէ զէնք պիտի չյաջողի քեզի վնասել, որեւէ լեզու որ կը փորձէ քեզ դատապարտել՝ պարտութեան պիտի մատնես, եւ քեզ ամբաստանողները իրենք պիտի դատապարտուին: Տիրոջ ծառայողներուն ծառանգութիւնը այս է. ես է որ զանոնք կ'արդարացնեմ, – կ'ըսէ Տէրը: Դուք որ ծարաւ էք՝ ջուրին եկէ՛ք, եւ դուք որ դրամ չունիք՝ եկէ՛ք գինի ու կաթ առէ՛ք առանց դրամի, առանց գին վճարելու:

Ինչո՞ւ ձեր դրամը կը վատնէք հացէն տարբեր բանի համար. ինչո՞ւ ձեր վաստակը կու տաք այնպիսի բաներու որոնք չեն կշտացներ: Ինձի մտիկ ըրէ՛ք եւ բարիք պիտի վայելէ՛ք, բարիքներով պիտի կշտանաք:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ
ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ

6.1- -7.1

Արդ, որովհետեւ Աստուծոյ գործակիցներն ենք, կ'աղաչենք ձեզի, մի՛ վատնէք Աստուծմէ ձեր ստացած շնորհքը: Որովհետեւ Աստուծմէ կ'ըսէ. «Երբ յարմար ժամանակը եկաւ՝ լսեցի քեզ, երբ փրկութեան օրը հասաւ՝ օգնեցի քեզի»: Ահա հիմա՛ է այդ յարմար ժամանակը. հիմա է փրկութեան օրը:

Որեւէ բանով պատճառ մի՛ ըլլաք որ Աստուծոյ գործը խափանուի կամ վարկաբեկուի. այլ բոլոր պարագաներուն ալ դուք ձեզ ցոյց տուէք որպէս Աստուծոյ պաշտօնեաներ, մեծ համբերութեամբ յանձն առնելով նեղութիւնը, վիշտը, չարչարանքը, ծեծը, բանտը, խոտվարաներու յարձակումները, յոգնութիւնը, անհունութիւնը, անօթութիւնը: Այս բոլորը տարէք մաքուր սիրտով, գիտակցօրէն, համբերատարութեամբ, քաղցրութեամբ, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, նշմարտութիւնը քարոզելով, Աստուծոյ գործութեամբ եւ արդարութեամբ զինուած՝ չարին դէմ յարձակելու եւ ինքզինք պաշտպանելու համար: Մի՛ այլալիք ո՛չ փառէն եւ ո՛չ անարգանքէն, ո՛չ գովասանքէն եւ ո՛չ մեղադրանքէն: Մարդիկ մոլորած թող ըսեն մեզի. մենք գիտենք թէ նշմարտութենէն չենք շեղած: Թող չուզեն մեզ քանչնալ. մենք գիտենք թէ մեզ լա՛ւ կը քանչնան: Թող մեռած սեպեն մեզ. մենք գիտենք թէ կենդանի ենք: Թող մեզ պատժապարտ համարեն. մենք գիտենք թէ մահուան դատապարտութենէն ազատած ենք: Թող մեր կեանքը տխուր կարծեն. մենք միշտ ուրախ ենք: Աղքատ թող սեպեն. մենք ուրիշներու կեանքերը կը նոխացնենք: Այո՛, կը թուի թէ ոչի՛նչ ունինք, մինչ ամէն ինչ ունինք: